

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ 2022

HANDES AMSORYA 2022

Հրատարակում է Գալուստ Կիլպենկեան Հիմնարկության նպաստով

This publication has been subsidized by Galouste Gulbenkian Foundation



# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԶ. ՏԱՐԻ 2022

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅՈՑ ՔՈՎ\*

Հ. Եփրեմ Պողոսեան

#### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ ժողովրդական մեծագոյն ազգային սովորութիւնը կրնանք կոչել անոր հարսանեկան աւանդոյթները: Հայ ազգագրութեան մէջ ընդարձակ տեղ կը գրաւէ ան հարուստ գրականութեամբ: Մեր շեշտածը, բնականաբար, նոր շրջանի մասին է՝ ԺԸ.-Ի. դար: Այս շրջանի համար ունինք առատ նիւթ եւ յիշատակութիւն ոչ միայն ընդհանրապէս հայ ժողովրդի հարսանեկան սովորութեան մասին, այլ եւ մէն մի հայկական շրջանի, հայկական քաղաքի կամ գիւղի սովորութեան մասին:

Մեր հաւաքած նիւթերու պաշարը մեզի թոյլ կու տայ գրելու նոր շրջանի հայկական հարսանիքի մասին բաւարար եւ գոհացուցիչ տեղեկատուութեամբ:

Մեր փափագն է սակայն անյիշատակ չանցնիլ նաեւ հին եւ միջին դարերու հայ ժողովրդի աւանդոյթներու մասին: Թէեւ մասնաւոր գրութիւն եւ ընդարձակ յիշատակութիւն չունինք հին դարերու հայ ժողովրդի ամուսնական կեանքի եւ հարսանեկան սովորութիւններու մասին, սակայն կան մանր դէպքեր եւ պատահական յիշատակութիւններ մեր հնագոյն գրականութեան մէջ, որոնք ընդնշմարել կու տան հայ հնաւանդ սովորութեան գոնէ որոշ պարագաներ: Հետեւաբար պիտի ջանանք համադրել բոլոր մանր ու աննշան երեւցած յիշատակութեան պատառիկներն ալ, կազմելու համար հնարաւոր պատկեր մը մեր հին ու միջին դարերու հայ ամուսնական կեանքի եւ հարսանեկան աւանդոյթներու մասին:

Ընդարձակ գրութիւն կամ ուսումնասիրութիւն մը, որ իրեն նիւթ բրած ըլլայ հայկական հարսանիքը ամբողջ Հայութեան մէջ՝ մեզի անծանօթ է: Ծանօթ են միայն Հ. Վարդան Վ. Հացունիի<sup>1</sup> գրու-

\* Ծանօթ.- Հ. Եփրեմ Պողոսեանի (1897-1972) աշխատանքին այս յետմահու հրատարակութիւնը կը պարտինք Յասմիկ Խալափեանին (Հայաստանի Ամերիկեան համալսարանի դասախօս), որ հանգուցեայի անտիպ գործը տեսնելով, ուզեց անպայման, որ այն հրատարակուի եւ լսննա ստաւ ամբողջ աշխատանքը ձեռագրի վրայէն ընդօրինակելու համակարգիչի մէջ: Սրբագրութիւնն ու խմբագրութիւնը կատարեց Հ. Պողոս Գոնանեան:

<sup>1</sup> Հ. Վարդան Հացունի, Հայոց հին հարսանիքը, Թեոդիկ, Ամէնուն տարեցոյց. 1912, էջ 199-208:



1332-2022

թիւնը՝ «Հայոց հին հարսանիքը» եւ նոյնին համառօտութիւնը՝ «Հայուհին պատմութեան առջեւ»<sup>2</sup>: Նոյնպէս Ե. Լալայեանի «Ազգագրական Հանդէս»-ներու մէջ տուած նկարագրականները քանի մը շրջաններու մասին:

Շեշտենք, որ մեր նպատակը չէ հոս ուսումնասիրութեան նիւթ ընել Հայոց ամուսնութեան սովորութիւնները իրենց բոլոր կողմերով եւ օրինական կանոններով: Վերջինիս համար բաւական լաւ գրութիւն մը ունի Դոկտ. Յակոբ Մեղաւորեան<sup>3</sup>: Մեր նիւթն է միայն հայկական հարսանիքը, գլխաւորաբար անոր ժողովրդական հանդիսութիւններով եւ սովորութիւններով, որ կ'ընդգրկէ հետեւեալ գլխաւոր բաժանումները.

Ա. Մաս.- Հարսանիքը հին ու միջին դարու Հայոց քով:

Բ. Մաս.- Հարսանիքը նոր շրջանի Հայոց քով:

### Ա. ՄԱՍ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՀԻՆ ԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՅՈՑ ՔՈՎ

Հին հայկական հարսանիքի մասին խօսած ատեն, նկատի ունինք բոլոր հին դարերու սովորութիւնները, հեթանոսական թէ քրիստոնէական: Եթէ որեւէ յիշատակութիւն կամ նոյն իսկ բառ ու բան կայ, որ հայ հարսանիքին կը հայի, կը համարինք թանկագին լուսաբանութիւն հին հայ հարսանիքի պատմութեան համար: Ունի՞նք, հնութեան մէջ, բաւական բառ ու բացատրութիւն հայ հարսանիքը բնորոշող: Եթէ այո, ապա ուրեմն այդ փաստ է,

թէ հին հայկական կեանքը ունեցած է իր հարսանեկան հանդիսութիւնները: Այս պիտի ըլլայ մեր առաջին ջանքը՝ հաւաքել հին հայ բառ ու բան, որոնք կը մատնանշեն հայ հարսանիքը կամ պսակը:

Հին եւ միջին դարերու Հայոց հարսանեկան հանդիսադրութիւններու եւ ամուսնական պսակի մասին քիչ թէ շատ յստակ գաղափար կազմելու համար, կը նախընտրենք խօսիլ հետեւեալ գլուխներու տակ.

Գլուխ Ա. Ամուսնական տարիքը հին դարերուն

Գլուխ Բ. Հարսանիստութիւն (նշանտուք)

Գլուխ Գ. Խնամութիւն

Գլուխ Դ. Օժիտ

Գլուխ Ե. Հարսանեկան զգեստ եւ զարդ

Գլուխ Զ. Հարսանեկան հանդէս

### ԳԼՈՒԽ Ա. ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒ

Քանի՞ տարեկանին կ'ամուսնանար հին ժամանակ հայ երիտասարդը, երիտասարդուհին: Որոշ տարիք մը կը պահանջուէ՞ր: Ի՞նչ եղած է այս մասին հին հայ սովորութիւնը:

Դոկտ. Յակոբ Մեղաւորեան կը գրէ, թէ՛ հին եւ թէ՛ նոր հայ ամուսնական օրէնքը մատնանշելով՝ «Հայ կանոնական իրաւունքի մէջ հարց չկայ ամուսնական մասնաւոր տարիքի մասին» (*En droit canonique arménien il n'est pas question de majorité matrimoniale spéciale*)<sup>4</sup>:

Մեղաւորեան հաստատելէ յետոյ, թէ մեր հեթանոսութեան շրջանէն չունինք տեղեկութիւն ամուսնութեան տարիքի մասին, թէ մեզի կը պակսի հին Հայոց ամուսնութեան պայմաններու մասին ճշգրիտ տրամադրութիւն, կը գրէ, թէ հին պատմութիւնը պահած է քանի մը օրինակ,

4 Անդ, էջ 88:

2 Հազունի, Հայուհին պատմութեան առջեւ, Վեներտիկ 1936, էջ 30-79:

3 Dr. Agop Mégavorian, Etude Ethnographique et juridique sur la famille et le Mariage Arménien, Lausanne, 1894:

որոնցմէ կրնանք հետեւցնել, որ ամուսնութիւնը թոյլատրուած էր շատ երիտասարդ հայերու միջեւ:

Այո՛, հինգերորդ դարու մատենագիր Փաւստոս Բիւզանդ աւանդած է մեզի չորրորդ դարէն դէպք մը, ուր Տիրան արքայորդի բռնի կը ստիպէ Վրթանէս հայրապետի որդին՝ տասներկու տարեկան Յուսիկը, որ իրեն փեսայ դառնայ. «Եւ յամուսնանալն բռնադատեցաւ ի թագաւորէն իբրեւ զմանուկ»<sup>5</sup>:

Կանխահաս տարիքի ամուսնութեան այս հին օրինակը, որ գուցէ հայ հեթանոս շրջանի ժառանգութիւն էր, իրեն այնքան հետեւողներ ունեցած էր, որ Սահակեան կոչուած կանոնները մասնաւոր շեշտ դրած են սաստելու համար եղած անկարգութեան. «Տղայոց կանայս մի՛ խօսեցին... մինչեւ ի կատարումն հասակի»<sup>6</sup>:

Անկարգութիւնը սակայն վարակիչ սովորութիւն դարձած է եւ թ. դարուն Գրիգոր Դերենիկ, որդի Աշոտ Արծրունեայ, մանուկ հասակի մէջ ամուսնացած է եւ երբ առաջին կինը կը մեռնի, 862-ին երկրորդ անգամ կը պսակուի Սոփիա Բագրատունիի հետ, երբ ինք տասնհինգ տարեկան էր<sup>7</sup>: Տարբեր չէր պարագան ամուսնացող աղջկան, որ բոլորովին խակ հասակի մէջ կը պսակուէր յաճախ: Մեծն Լեւոնի դուստրը՝ Զապէլ՝ եթէ տարեկան էր, երբ կին կը տրուի Փիլիպի, քաղաքական պատճառներով, 1222-ին<sup>8</sup>: Երբ կը մեռնի Փիլիպ, որուն հետ սիրով կապուած էր Զապէլ, այս անգամ զինքը կը պսակեն -

հակառակ իր կամքին - Հեթումի հետ, երբ ինք եւ Հեթում տասնմեկ տարեկան էին<sup>9</sup>:

Տարիքի ճշտումի համար կարելոր են հետեւեալները.

Ներսէս Շնորհալի (ԺԲ. դար) կը կանոնադրէ, որ մանչը 15 եւ աղջիկը 12 տարեկան ըլլան<sup>10</sup>: Դաւիթ Գանձակեցի (ԺԲ. դար) տասը տարեկանէն վար եղող մը պսակող քահանային համար նզով եւ կարգալուծութիւն կը պահանջէ<sup>11</sup>: Սիսի Ժողովը (1243-6) կ'որոշէ. Փեսան տասնչորս, հարսը տասներկու տարեկան<sup>12</sup>: Գրիգոր Տաթեւացիի ժամանակ (ԺԵ. դար) դեռ կը պահուէր Սիսի Ժողովի վերոյիշեալ որոշումը<sup>13</sup>:

### ԳԼՈՒԽ Բ. ՀԱՐՍՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Հարսնախօսութիւն, այսինքն, նշանտուք, որուն հին ոսկեդարեան համապատասխան բառն է «խօսումն». - «Ի խօսման կամք Գրիստոսի փեսային»<sup>14</sup>:

Շատ բնական է խորհիլ, թէ հնագոյն շրջաններուն մէջ ալ գոյութիւն ունեցած ըլլալու է, նախքան պսակը, իրար տեսնելու, իրար ճանչնալու եւ յօժար կամքով պսակի երթալու ժամանակաշրջան մը եւ պատրաստութիւն մը: Հարսնախօսութեան (նշանտուքի) շրջանն է այդ:

Տարակոյս չունինք, թէ հին հայուն քով «Բռնադատութիւնը», որ վերը տեսանք Փաւստոսէ (Բ. էջ 12) յիշատակուած

9 Անդ էջ 121-2:  
10 Ներսէս Շնորհալի, Նամակաճի. Վեներտիկ, 1838, էջ 164:  
11 Դաւիթ Գանձակեցի, Այալիպ որդի, «Պատասխանիք Հարցմանց».- ձեռ. Ս. Ղազարու, 511:  
12 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վեներտիկ, 1865, էջ 170:  
13 Գր. Տաթեւացի, Քարոզք ձմերան. Կ. Պ., 1740, էջ 90:  
14 Ս. Եփրեմի Մատենագր. Վեներտիկ, 1836, Բ., էջ 309:

5 Փաւստոս Բիւզանդացի, Պատմութիւն Հայոց, Վեներտիկ, 1933, էջ 22-23:

6 Սոփիէր Հայկակաճ, Վեներտիկ, 1853, էջ 95:

7 Թովմա Արծրունի, Պատմութիւն. Կ. Պ., 1852, էջ 226, 228, 233:

8 Մնրատ Սպարապետ, Տարեգիրք. Պարիս, 1859, էջ 121:

եւ առեւանգութիւնը, որ Շահապիվանի եօթներորդ կանոնով դատապատուած է. «Ոյք առեւանկ առնիցեն կալցին զկինն եւ անդրէն տացեն ցհայր եւ ցմայր իւր...»<sup>15</sup>, միակ սովորութիւնը չէին, այլ կար նաեւ երկակողմանի հաւանութիւնը երկու սեռի անձերու՝ իրենց կեանքը միացնելու եւ ընտանիք կազմելու համար:

Ասոր ապացոյցներն են՝ «խօսումն (նշանտուք), «խօսեալ» (նշանած աղջիկ) եւ «ընկալուչ» (նշանած երիտասարդ) բառերու գոյութիւնը արդէն հինգերորդ դարու հայ մատենագրութեան մէջ: «Նմանեալ է ճանապարհ մեր խօսման եւ զարդու հարսանեաց»<sup>16</sup>, «Փեսայն յառաջ քան զամուսնութիւնն սովոր են կոչել գիրք ընկալուչս»<sup>17</sup>:

Հարսնախօսութեան համար կային «առիթք» եւ «միջնորդք», որոնց պաշտօնը շատ գեղեցիկ կերպով գծած է Ս. Եփրեմ, գրելով եւ խօսելով հարսանիքի մասին. «Այլ որ առիթքն միջնորդք իցեն, նոքա պատմեն հարսինն վասն մեծութեան փեսային եւ վասն անուան նորա եւ վասն վայելչութեան եւ զօրութեան նորա: Սոյնպէս եւ զհարսնն գովեն առաջի փեսային եւ պատմեն նմա վասն բնութեան գեղոյ կուսին, զոր խօսեցան նմա»<sup>18</sup>: Գաղափարներ ու արտայայտութիւններ, որոնք օտար չէին հինգերորդ դարու հայուն եւ սապէտք չունէր այս գաղափարներն ու արտայայտութիւնները փոխ առնել ասորիներէն: Յաջորդ դարերուն աւելցան ուրիշ յորձորը միջնորդի այդ պաշտօնին համար, ինչպէս ութերորդ դարուն, որ նշանտուքի համար ունէր «խօսնակք»-ը

<sup>19</sup>: Ասոնց ամենուն պաշտօնն էր ամուսնանալիք աղջկան եւ մանչուն միջեւ միջնորդի դեր կատարել, իրար ծանօթացնել, իրար համոզել եւ երկակողմանի հաւանութիւնը ստանալ:

719-ի Դուրիսի ժողովը իր 16-րդ կանոնով կը պահանջէր, որ ինչպէս առաջին պսակին, նոյնպէս երկրորդ անգամ պսակողները «միջնորդներով» ու «խօսնակներով» նախ հաւանեցուին եւ իրարու հետ ամուսնանալու յօժարեցուին: Այդ կանոնը կ'ըսէ. «Իսկ որ զերկուսեան նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդօք եւ խօսնականաւք հաւանեցուցանել յիրեւրաց յօժարութիւն եւ յեկեղեցւոյն եւ ի քահանայիցն աւրհնութենէ ընդունել զնշան. զուգաւորութեան իւրեանց...»<sup>20</sup>: Ներսէս Շնորհալի կանոնով կը պարտաւորէր քահանաները, որ «առանց կամաց առնն եւ կնոջ ի բռնութենէն բռնաւորաց» չպսակեն<sup>21</sup>: Հին հայկական նշանտուքը հետեւեալ կերպով նկարագրած է Հ. Վ. Հացունի. «Հարսանիքը կը սկսէր հարսնախօսութեամբ, յորում միջնորդք կամ առիթք կամ խօսնակք, այրեր երիտասարդին կողմանէ եւ կիններ՝ կուսին, կ'երթային առաջինք՝ աղջկան եւ վերջինք՝ երիտասարդին տունը, կը քննէին իրենց ընտրելոյն դաւանութիւնն ու տոհմային աստիճանը, որ իրարու հաւասար պիտի լինէին»<sup>22</sup> եւ կը ստանային երկուստեք իրարու հաւանութիւնը, իւրաքանչիւրն իւր թեկնածուին գովեստն ընելով ըստ անձին եւ ընկերական վիճակին<sup>23</sup>:

Արքայական ամուսնութեան մէջ անհրաժեշտ էր թագաւորին կամքն ալ: Տի-

19 Յովն. Օձնեցի, Մատենագր., Վեներիկ, 1836, Բ., էջ 27:  
 20 Մելիք-Թանգեան, անդ, էջ 415:  
 21 Ծնորհալի, Նամակահի, անդ, էջ 164:  
 22 Բագմավէպ, 1889, էջ 233:  
 23 Ներսէս Լամբրոնացի, Մեկն. Խորհրդոյ պատարագի. Վեներիկ, 1847, էջ 122.

15 Մելիք-Թանգեան, Հայոց Եկեղեցական իրաւունքը. Ա., Օուշի, 1903, էջ 331:  
 16 Ս. Եփրեմի Մատենագրութիւնը. էջ 307:  
 17 Յովն. Ոսկեբերան, Մեկն. Մատթ., Ա., էջ 53:  
 18 Ս. Եփրեմի Մատենագրութիւնը, էջ 310:

րիթ հրաման խնդրեց Արշակէն առնելու Փառանձեմը<sup>24</sup>: Համաձայնութենէն վերջ երիտասարդը կ'երթար կուսին տունը, իրար կը տեսնէին, կը հաճէին իրարու եւ ապա կը կատարուէր ամուսնութեան դաշինքը<sup>25</sup>, կամ խօսումն<sup>26</sup>, կամ նշանադրութիւնը<sup>27</sup>, որուն միջին դարուն կ'ընկերանար եկեղեցական արարողութիւն մըն ալ ներկայութեամբ քահանային, «խաչփոխ առնելով»<sup>28</sup>, կամ իրարու յանձնելով խաչն իբր վկայ տրուած խոստման:

Յետոյ մտաւ կուսին ձեռքը երիտասարդի ձեռքին մէջ դնելու սովորութիւնը (Մաշտոց 1216) եւ աւելի ուշ կամ գուցէ ասոր հետ իբրեւ նշան կու տային հարսնացուին «մատանի կամ ապարանջան կամ գինդ»<sup>29</sup>: Ասոր յաջորդեց, ըստ 1342-ի ժողովոյն ու Տաթեւացւոյն, արեւմտեան փոխանակութիւնը կամ «աւանդումն մատանոյ» խօսեցեալներուն<sup>30</sup>, զոր կը դնէին «երկու տանուտէր եւ մին քահանայ» ըստ Գ. Եղնկացւոյն<sup>31</sup>, կամ ըստ Տաթեւացւոյն խօսեցեալք իսկ իրարու մատներուն կ'անցնէին<sup>32</sup> եւ այնուհետեւ կը դառնային իրարու՝ երիտասարդն՝ ընկալուչ կամ խօսնայր<sup>33</sup>, եւ կոյսը՝ խօսեալ կամ խօսեալ ընկալուչ<sup>34</sup>: Հոս հարսնացուին ծնողաց կը տրուէր «թաս մը գինի» ժողովրդական սովորութեամբ, իսկ բոլոր տօներուն մինչեւ

24 Փաւստ. Բ. Պատմ. էջ 122:  
 25 Զաքարիա Կաթող. «Մատթ.»- Ձեռ. 919, Ս. Ղազարու, էջ 107:  
 26 Ս. Եփրեմ, Բ. էջ 307, 309:  
 27 Յովն. Երզնկացի, «Խրատք».- Ձեռ. 1447, Ս. Ղազարու, էջ 609:  
 28 Մաշտոց ԺԱ. դար, Ձեռ. Ս. Ղազարու:  
 29 Բագմավէպ. 1889, էջ 233:  
 30 Y. Mansi, S.S. Conciliorum nova Collectio, ԻՅ., Փլորենտիա, 1759, էջ 1264:  
 31 Գեորգ Երզնկացի, «Խրատք վասն պսակի».- Ձեռ. 1372 Ս. Ղազարու:  
 32 Գր. Տաթեւացի, Քարոզք Ամարան, էջ 199:  
 33 Ծնորհալի, Մեկնութիւն Մատթ., Կ. Պ., 1825, էջ 29:  
 34 Յովն. Ոսկեբ., Մատթ., Ա., էջ 53:

պսակը խօսեցեալին տունը կ'երթային «ընծայուք եւ կերակրովք»<sup>35</sup>, ընծան փեսային եւ կերակուրը հարսնացուին կողմէ<sup>36</sup>:

ԳԼՈՒԽ Գ. ԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Այս բառը ոսկեդարեան շրջանէն է. «Խնամութիւն արար Սողոմոն ընդ Փարաւոնի» (Գ. Թագ. Գ.1):

Օրիորդի մը երիտասարդի մը հետ «խօսեալ» (նշանած) ըլլալովը երկուքին ընտանիքներու եւ ազգականներու միջեւ խնամական կապը կը ստեղծուէր: Բայց խնդիրը հին դարերու մասին է. — Ի՞նչպէս էր հին Հայոց քով խնամութիւնը. ի՞նչ տեսակ պարագաներ նկատի կ'առնուէին խնամութիւն սկսելու համար: Անշուշտ ան շատ տարբերութիւն չունէր ներկայ ժամանակէն, երբ նկատի առնենք հին ժամանակներու հասարակ հայ ժողովուրդը եւ ռամիկը:

Բայց քանի որ ունեցած ենք ազնուական դասակարգ, աւագորեար, իշխանական աստիճաններ, արքայական տուներ հին պատմական օրերուն, ի՞նչ կայ այդ մասին գիտնալիք:

Հին հայ խնամութեան մասին խօսելով՝ Հ. Հացունի կը գրէ. «Խնամութեան մէջ մեծապէս նկատողութեան կ'առնուէր դասակարգի հաւասարութիւնը: Մեր ազատանիի ամուսինները իրենց աստիճանակից տուներէն եղեր են միշտ, շատերուն տոհմերն ալ արդէն ծանօթ պատմութեան մէջ եւ այս սովորութեան զարտուղութիւններու չենք հանդիպիր բնաւ քրիստոնէական շրջանին, երբ ամուսնութեան մէջ մտաւ միակնութեան օրէնքը: Նպատակն էր ցեղային ազնիւ արիւնն անխառն պահել, կենակից ունենալ եւ իրենց տան կառավարութիւնն յանձնել ազգով ու

35 Բագմավէպ, 1889, էջ 233:  
 36 Հացունի, Հայունի, էջ 71:

դաստիարակութեամբ բարձր ձեռքերու եւ հուսկ ապահովել տնտեսական ու քաղաքական բարիքները»<sup>37</sup>:

Կայի<sup>38</sup>ն ճշգրիտ նշանակուած ու կանոնուած սահմաններ խնամութեան աստիճաններու մասին:

Վաղ հնութեան մէջ այդ մասին եղած որոշումներ կրնայինք յուսալ Աշտիշատի (Դ. դար) եւ Շահապիվանի (Ե. դար) ժողովներէն: Առաջինին մէջ շեշտուած է միայն որ «մերձաւոր» ազգականներու միջեւ տեղի չունենան ամուսնութիւններ «մանաւանդ ի մերձաւորական ի նուոց եւ որ դամ մի այսմ նման լեալ էր ինչ»<sup>38</sup>: Ուրեմն կ'արգելուէր ամուսնութիւնը նուին, այսինքն, հարսին եւ ասոր նման մօտաւոր ազգականներու հետ:

Աշտիշատի ժողովը տեղի ունեցած է 365-ին եւ մեր եկեղեցական-ազգային ժողովներու առաջինն է: Զայն գումարած է Ս. Ներսէս հայրապետ ժողովի հրաւիրելով եկեղեցական եւ աշխարհական անձեր: Ժողովի կազմած կանոններէն վեց հատը ծանօթ են, որոնցմէ առաջինը կ'ըսէ. «Ժողովը արգիլեց նախարարներուն, որ իրենց տոհմական ժառանգութիւնը պահպանելու համար մերձաւոր ազգականներու մէջ խնամութիւն չընեն»<sup>39</sup>:

Մելիք-Թանգեան կը գրէ այդ առթիւ. «Մերձաւոր ազգականների ամուսնութիւնը շատ արմատացած էր ազնուական դասի մէջ, մանաւանդ իրանց կալուածատիրական իրաւունքը ժառանգաբար պահելու համար: Ժողովս թէեւ արգելում է մերձաւորների ամուսնութիւնը, բայց որոշ աստիճաններ չի նշանակում այդ մասին»<sup>40</sup>:

37 Անդ, էջ 32:  
38 Փաւստոս Բիւզանդ. Պատմ., էջ 85-6:  
39 Մելիք-Թանգեան, Հայ Եկեղեց. իրաւունք, էջ 315:  
40 Անդ:

Ինչպէս կը տեսնուի, ժողովի այս կանոնը պատիժ չի սահմաներ յանցաւորին:

Շահապիվանի ժողովը գումարուած է 447-ին եկեղեցական եւ աշխարհական ժողովականներով: Ժողովը ունեցած է 20 կանոններ, որոնցմէ երկուքը ունին խնամիական եւ ազգակեանական կապերու մասին հետեւեալ տրամադրութիւնները: 12-րդ կանոնը կ'ըսէ. «Եթէ որդին հօրը կինը առնէ, եկեղեցի չմտնէ, բոլոր ժողովներէն նզովուած ըլլայ, մինչեւ որ 7 տարի ապաշխարէ...», «Իսկ եթէ հայրը որդւոյն կինը առնէ, կամ եղբայրը եղբոր կինը, նոյն պատիժը»<sup>41</sup>: Արեւակեցական առաջին եւ երկրորդ աստիճաններու ամուսնութիւնը բոլոր եկեղեցիներէն կանոններով խստիւ արգիլուած էր:

13-րդ կանոնը կը սահմանէ. «Ոչ ոք համարձակի ամուսնանալ քեռորդւոյն, եղբորորդւոյն կամ հօրաքրոջ կամ ազգականի հետ մինչ չորրորդ ծնունդը...»<sup>42</sup>: Եօթներորդ դարուն հայ իշխան մը «եղբոր կին» առած ըլլալուն՝ կը խրատուի եւ գայթակղութիւնը կը վերցուի<sup>43</sup>:

Մօտաւոր ազգականներու միջեւ ամուսնութիւնները պախարակուած են հայ եկեղեցիէն նաեւ յաջորդ դարերուն, սակայն անկարգութեան առջեւ կարելի չէ եղած առնել. Սմբատ Բ, (977-990) Բագրատունեաց Թագաւորը իր քրոջ աղջիկը կնութեան առաւ<sup>44</sup>: Կիրակոս Գանձակեցի ԺԳ. Դարու համար կը վկայէ, թէ Արեւելեան Հայաստանի մէջ տակաւին Հեթանոսական սովորութիւնը կը տիրէ ազգականներու միջեւ ամուսնութիւն կնքուելով<sup>45</sup>:

41 Անդ, էջ 334:  
42 Անդ, էջ 33:  
43 Յովն. Մամիկոնեան, Պատմ., Վեպետիկ, 1832, էջ 29:  
44 Ստեփանոս Ասողիկ, Պատմ., Պետերբուրգ, 1885, էջ 246:  
45 Կիր. Գանձակեցի, Պատմութիւն, էջ 162:

Նոյնն է պարագան տասնհինգերորդ դարուն ալ<sup>46</sup>:

Սիսի 1243-6-ի ժողովը մինչեւ վեցերորդ աստիճան կը բարձրացնէ ազգականութեան արգելքը ամուսնութեան համար: 7-րդ կանոնը կ'ըսէ. «Զպսակն ընտրութեամբ արացեն, վեց ծննդովը հեռացեալ յազգականութենէ արեան»<sup>47</sup>:

ԳԼՈՒԽ Դ. ՕԺԻՏ

Հինգերորդ դարու ոսկեդարեան Հայերէնը հետեւեալ բառերը ունի «օժիտ» իմաստով. — պաշտատական, թախանձք, կտիրք, վարձանք եւ օժիտ: Խօսինք կարգով:

1. Պաշտատական<sup>48</sup> նուէր, գոր հայրը կամ ծնողը կու տային իրենց աղջկան, երբ սա կը պսակուէր: Համապատասխան յունարէն բառը - փեռնէ - կը նշանակէ «բերուած նուէր»:

Բառիս երկրորդ տեղիքը<sup>49</sup> հայերէն «պաշտատական»-ի դիմաց յունարէնը կը դնէ «ափոսթոլէ», որ կը նշանակէ առաքուած, ղրկուած նուէր:

2. Թախանձք<sup>50</sup>. բառիս դիմաց յունարէն բնագիրն ունի «փոքթա», որ կը նշանակէ խնդրուած նուէր:

3. Կտիր. Բնագիրը նոյնն է վերինին հետ<sup>51</sup>, ուր յունարէն միակ բառին (փոքթա) դիմաց հայերէն թարգմանիչը երկու բառ դրած է - թախանձք եւ կտիրք, որմէ կը տեսնուի, թէ հայուն համար «թախանձք» եւ «կտիրք» հոմանիշ են եւ հետեւաբար հայերէն «կտիրք» կը նշանակէ

46 Թովմա Մեծոփեցի, Պատմ., Պարիս, 1860, էջ 112-7:  
47 Մելիք-Թանգեան, անդ, էջ 45:  
48 Յետու, ԺԲ. 10:  
49 Գ. Թագ. Թ. 16:  
50 Յովն. Ոսկեք. Մեկն. Թղթոյն Պատմութի, Ա. Վեպետիկ, 1862, էջ 665:  
51 Անդ, էջ 665:

«խնդրուած նուէր»: Այս երկու բառերն ալ «օժիտ» իմաստով են:

4. Վարձանք<sup>52</sup> «Յաճախեցէք յոյժ զվարձանս եւ զօժիտս», ուր յունարէնը լոկ «փեռնէ» ունի: Բառս՝ «վարձանք» թէ՛ իմաստով եւ թէ՛ մատնանշուած սովորութեամբ հայ-հեթանոսական շրջանի բառ մըն է, որովհետեւ կը ցուցնէ այն նուէրը, զոր փեսան հարսին ծնողաց կու տար իբր վարձք եւ փոխարինութիւն հարսին համար:

Հայ հեթանոսական շրջանի սովորութիւնը կը յիշէ Խորենացի երբ Արտաշէս արքայ կ'ամուսնանայ Ալանաց Սաթենիկի հետ. «լայքա շատ եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զՏիկին Օրիորդն Սաթենիկ»<sup>53</sup>:

Հայ հեթանոսական այս սովորութիւնը մինչեւ վեցերորդ դար դեռ կը տեւէր, ըստ Հ. Հացունիի<sup>54</sup>:

5. Օժիտք<sup>55</sup> բառս ոսկեդարեան մատենագրութեան մէջ «վարձանք» բառի քով իբրեւ աւելադրութիւն գործածուած է, ինչպէս վերը տեսանք: Այս պարագան կրնայ բառիս նշանակութիւնը, հնութեան մէջ, «վարձանք» իմաստով բառի մը արժէքը տալ: Բանի որ «վարձանք» ի հետ գործածուած է, հաւանական է որ հայ հնութեան մէջ «օժիտք» եւ «վարձանք» նոյն իմաստը ունէին:

Հայ քրիստոնէական շրջանին «օժիտք» բառը յատկացուած է հարսին տրուած նուէրներուն: Զգօնի<sup>56</sup> յիշած «օժիտք»ը ուրիշ բան չէ, եթէ ոչ հարսին փեսային տուը տարած նուէրը:

Հինգերորդ դարու հայ հարսին իբրեւ «օժիտ» տարած իրերու մասին գաղափար

52 Սոփերք, Ի. 68 եւ ԾԱՃ. Լ. Դ. 12:  
53 Խորեն. Պատմ. էջ 128:  
54 Հայրնիս Պատմութեան առջեւ, անդ, էջ 36:  
55 ԾԱՃ. Լ. Դ. 12.  
56 Կ. Պ. 1824, էջ 374

մը կու տայ Շահապիվանի ժողովը (447-ին), որ իր հինգերորդ կանոնով կը սահմանէր. «Եթէ կին ոք արատ եւ ամուլ պատահեցաւ եւ այրն հանցէ զնա վասն ամուլութեան, որ ինչ կնոջն կարասք բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, եթէ հանդերձ, եթէ արծաթ, առնուլ իշխեսցէ եւ գնալ»<sup>57</sup>:

Միջին դարու հայ ազնուական դասը նորահարսին մեծ ու թանկագին օժիտ կը պատրաստէր: Յիշենք քանի մը օրինակ. Թորոս Բ. իշխան Ռուբինեան (1144-68) իր Ռիթա դուստրը պսակած ատեն անոր 20,000 դեկան օժիտ կու տայ<sup>58</sup>: Լեւոն Մեծ (1219) իր եղբոր աղջկան՝ Ալիօթի օժիտ կու տայ Մսիս քաղաքը իր գաւառով:<sup>59</sup> Հեթում Ա. (1226-1272) իր Ֆիմի աղջկան օժիտ տուաւ 25,000 ոսկի<sup>60</sup>: Խեթենիկ Արծրունի (ԺԳ. Դար) Աղթամարի կէսը օժիտ կու տայ իր դուստր Սեֆեդինի<sup>61</sup>:

**ԳԼՈՒԽ Ե. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԶԳԵՍԸ**

Եթէ մեր Գողթան երգերը կրնային երգել հայ արքայական հարսանիքի առթիւ «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշէսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկան», ինչ պսպղուն եղած պիտի ըլլայ անոնց հարսանեկան զգեստը, զարդն ու պսակը:

Ի՞նչպէս եղած է, իրապէս, մեր հին շրջանին, ըսենք հեթանոսական դարերուն, Հայ թագաւորներու եւ թագուհիներու, ազնուական դասակարգերու եւ առհասարակ հայ ժողովուրդի հարսանեկան

հագուստ կապուստն ու զարդեղէնը: Կա՞յ որեւէ յիշատակութիւն հնութեանէն:

Հ. Վարդան Վ. Հացունի ունի ուսումնասիրութիւն մը՝ «Պատմութիւն հին հայ տարագին», որուն մէջ յատուկ գլուխ մը նուիրած է «Հարսանիքի տարագին», ուր սակայն տխուր ցաւով կը գրէ, որ «Երիցագոյն դարերէն կը պակսին մեզ վկայութիւնք պսակուածներուն հանդերձից մասին»<sup>62</sup>:

Չունինք ուրեմն յիշատակութիւն հնագոյն դարերու հայ հարսանեկան զգեստի եւ զարդի մասին: Զանանք սակայն մանրագոյն ակնարկութիւնները քովէ քով բերելով կազմել ամփոփ պատկեր մը մեր հնագոյն շրջաններու հարսանիքի զգեստի եւ զարդի մասին:

1. Փեսայի զգեստը. Հայ արքայական շրջաններէն հնագոյն յիշատակութիւնը Տրդատի մասին է, որ հարսանիքի պատրաստուած ատեն արքայական պատմուճան կը կրէր<sup>63</sup>: Հեթանոսական շրջանէն եկած այդ սովորոյթը հետզհետէ կը զարգանայ եւ կը ճոխանայ: Թ. դարուն հայ փեսան «պաճուճեալ պճնի ի զարդս եւ ի զգեստս»<sup>64</sup>: Ան զարդարուած «գինուք», նստած է «զարդափայլեալ երիվարի» վրայ եւ իր զէնքն է - ըստ Գէորգ Սկեւոսցիի (ԺԲ-ԺԳ. դար) «Թուր ի մէջքն կապեալ»<sup>65</sup>:

Թովմաս Արծրունի (Ժ. դար) իր ժամանակի հայ փեսան կը տեսնէ «զգեստու հարսանեաց... ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածովն» եւ «մանեկաց ի պարանոցն»<sup>66</sup> եւ Տաթևացի

57 Մելիք-Թանգեան, անդ, էջ 344):  
 58 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Պարիս 1859, էջ 96:  
 59 Տարեգիրք Կիլիկիոյ.- Ձեռագիր Ա.Ղազարու, 1308, էջ 275:  
 60 Հ.Ղեւոնդ Ալիշան, Յուշիկը Հայրենեաց Հայոց, Բ, Վեներտիկ 1920, էջ 471:  
 61 Թովմաս Արծրունի, Պատմութիւն, Պետերբուրգ 1887, էջ 321:

62 Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վեներտիկ, 1923, էջ 296:  
 63 Ագաթանգեղոս, Պատմ. Հայոց, Վեներտիկ, 1835, էջ 146:  
 64 Ջաքարիա Կաթողիկոս, «Ծառք ԺԶ», - Ձեռագիր Ա. Ղազարու:  
 65 Հացունի, Տարագ, էջ 297:  
 66 Թովմասի Արծրունու Պատմ., Կ. Պ., 1852, էջ 191:

(ԺԴ. դար) փեսային հագուստ-կապուստն ու զարդը սա բաւերով տուած է. «Չորս բոլոր անձինն է եւ երեք գլխոյն», որոնք կրնան ըլլալ այդ ժամանակի հայուն զգեստի ու զարդի մասերը - կապայ, ուղի, գօտի եւ վարտիք, օղեր, գտակ եւ պսակ<sup>67</sup>:

2. Հարսին զգեստը. - Տրդատ Թագաւոր Հոփսիսիմէի կը ղրկէ «հանդերձս ազնիւս գեղեցիկս, փափուկս, պայծառս եւ զարդարանս երեւելիս մատուցանէին նմա յարքունուստ, զի զարդարեսցի եւ չքով եւ պատուով մտցէ ի քաղաքն»<sup>68</sup>:

Խորենացի հայ հարսին կը հագցնէ «զվարդագոյն իմոյ հարսնութեան արկի զարդ», այսինքն, պատմուճանը, ինչպէս որ Ջաքարիա Կաթողիկոսի ատեն ալ հարսը կը «զարդարեն պայծառ եւ հրաշալի պատմուճանօք», ոտքերը հագցնելով «մաքրափայլ ագանելօք», որոնք կրնային ըլլալ ճերմակ կօշիկներ<sup>69</sup>: Գրիգոր Նարեկացի հայ հարսին զգեստն ու զարդը նկարած է Ապարանից եկեղեցւոյն քանդակները դիտելով «իբր զծաղկեղէն զգեստուց հանդերձանս սրբաբեհզն պատմուճանի... հարսինն»: Ինչպէս կը տեսնուի, սպիտակ բեհզէ կարուած էր հարսին պատմուճանը, բայց բացարձակ չէր սպիտակը. կար նաեւ «կարմիր ձորձ» եւ «ոսկեթել զարդարեալ» ինչպէս կը յիշուի Խաչատուր Կեչառուեցիէն. «ի կարմիր ձորձ եւ յոսկեթել զարդարեալ»<sup>70</sup>:

բ) Քողը կարեւոր մաս կը կազմէր հարսին հագուստ-կապուստին եւ կ'ըլլար սովորական տիկիներու քողէն աւելի մեծ: Փաւստոս Դ. դարու հարսանիքը գիտէ «քողով հարսանեաց»<sup>71</sup>: Փառանձեմ կը

կրէր թանձր քող մը, որ անտեսանելի կը դարձնէր իր դէմքը<sup>72</sup>:

Հացունի կը հաստատէ թէ քողը իբրեւ հարսանեկան զարդ կը մնայ բոլոր դարերուն: Ծնորհալի Անի քաղաքը կը կոչէ «վայելչական հարսն ի քողի». Գր. Տղայ կ'ըսէ. «Ջհարսնութեան քողն բարձին»<sup>73</sup>:

գ) Հարսանեկան զարդերէն յիշենք նաեւ հետեւեալները. Յովհ. Օձնեցւոյ քով կայ քայռամանեակը. «Ձոսկետեսակ քայռամանեկին զգեղեցկութիւն»<sup>74</sup>: Նարեկացի կը տեսնէր հարսին վրայ «Ջարդարանս պէսպէս... ի զգեստուց եւ յոսկւոյ եւ ի մարգարտոյ եւ ի քարանց պատուականաց»<sup>75</sup>: Գր. Սկեւոսցիի համեմատ հարսը ունի «Քառամանեակ զպարանոցան», «Գինդն Կարեկան ընդ սարդիոն յոռեալ» ականջներէն կախ եւ «ապարանջանք» ձեռքերուն վրայ: Հայ հարսը ունէր անտես զարդ մըն ալ՝ «Ջտաշխին ծրարս ընդ ստեամբքն»<sup>76</sup>, այսինքն, բուրուճանաւէտ խունկեր:

3. Կային զարդեր ալ, որոնք թէ՛ փեսային եւ թէ՛ հարսին հասարակաց էին, օրինակ՝ «պսակ հարսանեաց»ը, զոր կը յիշէ Փաւստոս Բուզանդ<sup>77</sup>: Ըստ Հացունիի, պսակը հին ատեն դալար ծաղիկներէ կը կազմուէր, ինչպէս կը զգացնէ Եղիշէ, գրելով Վարդանանց աքսորական ազատանիին կիներուն համար. «Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին ըզպսակասէր ամուսինս նոցա»<sup>78</sup>: Ծաղիկները կուսուլթեան խորհրդանշան էին եւ Շահապիվանի ժողովը երկրորդ ամուսնութեան եւ ոչ-կոյ-

72 Անդ, էջ 116:  
 73 Հացունի, Տարագ, էջ 29:  
 74 Յովհ. Կաթող. Օձնեցի, Մատենագրութիւնը, Վեներտիկ, 1833, էջ 1:  
 75 Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւն, Վեներտիկ, 1840, էջ 532:  
 76 Սոփերք ԺԵ, 43:  
 77 Փաւստոս Բուզանդ, Պատմ., էջ 229:  
 78 Եղիշէ վարդապետ, Մատենագրութիւնը, Վեներտիկ, 1859, էջ 157:

սերու ո՛չ թէ պսակ, այլ ուռ կը կանոնէ (Կանոն է): Այնպէս որ եթէ ամուսնացողներէն մին կոյս էր, կը ստանար պսակ, եթէ չէր, կը ստանար ուռ:

Միջին դարերուն ծաղկեայ պսակին հետ կը սկսի երեւնալ մետաղեայ պսակն ալ, նմանողութեամբ հին թագաւորականին, որ էր «թագ ոսկիակուռ՝ ակամբք փայլեալ, ի գարդս արքայական հարսանեաց»<sup>79</sup>: Թովմա Արծրունի կ'ակնարկէ հարսանեական «ոսկեհոռ թագակապ գարդու պսակացն»<sup>80</sup>: Զաքարիա Կաթողիկոսի քով ալ հարսը «Հոյակապ տեսեամբ պսակեալ, յոսկեհոռն զարդակերպեալ»<sup>81</sup>: Նոյն այս թագն է յիշուած Բարսեղ Ճոնէն, Գէորգ Ակեռացիէն եւ Տաթեւացիէն<sup>82</sup>: Այս թագին պատճառով է որ փեսան թագաւոր եւ հարսը թագուհի կը կոչուի<sup>83</sup>:

Պսակէն վերջ նարոտն է, որ կը կապուի հարսին ու փեսային գլխուն, հիւսուած ըլլալով կարմիր ու սպիտակ գոյներով, ինչպէս կը յիշէ Տաթեւացիին<sup>84</sup>: Նարոտին կարմիր ու սպիտակ գոյները կը մեկնուին իբրեւ խոհրդանշան Փրկչին կողէն հոսած արիւնին ու ջուրին: Ս.Ղազարու 1507-ի Մաշտոցը կը նկարագրէ նարոտը «երեքկողի մանեալ հանդերձ կարմրով»:

4. Հարսնեւորներուն ու փեսաւէրներուն զգեստը. Փեսային ու հարսին ընկերացող հարսնեւորներն ու փեսաւէրներն ալ զարդարուած կ'ըլլային իրենց գեղեցկագոյն զգեստներովն ու զարդերովը: Խորենացին Հռիփսիմէի ներբողին մէջ արքայական հարսին կ'ընկերացնէ «Օրիորդք թագաւորագունք եւ կուսանք հայկազնեացս, ոսկիակուռ շքեղաշուք երկններին»

զարդուք»<sup>85</sup>: Իսկ ըստ Զաքարիա Կաթողիկոսի՝ «Գունդք վառեալք (զինուած) պատանեկաց առաջի եւ զկնի ընթանան գեղազարման զարդօք եւ հրաշափառ տեսեամբ եւ գեղապաճոյճ երիվարօք եւ փողփողեալ նշանակօք (դրօշներով) ի սքոյն տարեւածեալք, դրօշակիրք եւ մկնդաւորք առընթեր կալով»<sup>86</sup>:

5. Հարսանիքի երրորդ օրը կը վերցնեն հարսին ծանր քողը, այն փոխարինելով թեթեւ քողով մը, իսկ ութերորդ օրը կ'առնէին պսակը, որ փեսային քով առաջին օրն իսկ առնուած կ'ըլլար: Հարսը իր ամբողջ հարսնութեան շրջանը կ'անցնէր «ամրածածուկ քողածիգ ծնգասէր» վիճակի մէջ, ինչպէս կը յիշուի Գ. Մակար. Գ. Ծ-ի հայկական թարգմանութեան յաւելուածին մէջ<sup>87</sup>:

ԳԼՈՒԽ Զ. ՀԱՐՍԱՆԻՔԻ ՀԱՆԴԵՍԸ

Վերը մեր տուած հինգերորդ դարու ոսկեդարեան մատենագրութեան բառագանձէն, որ անշուշտ ամբողջական չէ, ակնյայտի կ'ըլլայ, որ հին հին դարերուն – հեթանոսութեան շրջաններէն ի վեր – միշտ ունեցած է հայ ժողովուրդը հարսանեկան հանդէսի վերաբերեալ բոլոր բառերը, որոնց գոյութիւնն ինքնին ապացոյց է, թէ հայ ժողովուրդը հնութեան (հեթանոսութեան) մէջ ալ ունեցած է իր հարսանիքը եւ իր հարսանեկան հանդէսները:

Կը մնա՞յ որեւէ յուշք մը – հոգ չէ թէ փոքր եւ մասնակի – ապացոյց մը հնութեան ժամանակներէն, յիշատակութիւն մը – հին հարսանիքի վերաբերեալ:

Ունինք յիշատակութեան նշմար մը մեր հեթանոս դարերէն: Արտաշէս Բ. հայ արքան գերի կը բռնէ Ալաններու ար-

79 Խորենացի, 325:  
80 Թովմա Արծրունի, Պատմ. էջ 191:  
81 Հացունի, Տարագ, էջ 298:  
82 Անդ, էջ 298:  
83 Խորենացի, Պատմութիւն, էջ 311:  
84 Տաթեւացի, Քարոզ Ամարան, էջ 203:

85 Խորենացի, անդ, էջ 311:  
86 Հացունի, Տարագ, էջ 299:  
87 Գ. Սկեռացի, Մեկութիւն Եսայեայ,- Ձեռ. Ս. Ղազարու: Տաթեւացի, Քարոզ ամարան, էջ 203:

քայորդին: Ալան արքան կը խնդրէ իր որդին ետ տալ իրեն: Արտաշէս չ'ուզեր: Այն ատեն Ալանաց արքայի դուստրը՝ Սաթենիկ յառաջ կ'անցնի, Կուր գետի եզերքը կը մօտենայ ու կը ձայնէ Արտաշէսին. «Քեզի՛ կ'ըսեմ, այր քաջ, Արտաշէս, որ յաղթեցիր քաջ ազգին Ալանաց, եկուր համոզուէ Ալաններու գեղաչուի դուստրէն եւ տուր պատանեակը մեզի ետ, զի քէնի մը պատճառով չ'արժեր, որ դիւցազն ազգ մը ուրիշ դիւցազն ազգի մը կեանքն ու կենդանութիւնը բառնայ մէջտեղէն, կամ ստրկացնէ կեանք մը եւ ատով յաւերժական թշնամութիւն մտցնէ երկու քաջ ազգերու միջեւ»:

Արտաշէս Հայոց արքայ լսելով այսքան իմաստուն խօսքը՝ կը մօտենայ գետին միւս եզերքը եւ տեսնելով գեղեցիկ կոյսը՝ կը զարնուի անոր գեղեցկութեան ու կը փափաքի զայն կնութեան առնել, դաշինք եւ բարեկամութեան ուխտ դնել Ալաններուն հետ, ազատ արձակել պատանին: Արտաշէս արքայ իր դայեակին՝ Սմբատ սպարապետին կը յանձնէ մջնորդութեան գործը: Ու Սմբատ կը դիմէ Ալաններու արքային՝ խնդրելու Ալանաց Սաթենիկ օրիորդին ձեռքը Արտաշէս արքայի համար:

Ալաններուն արքան կը հաւանի տալ իր աղջիկը հարս Հայոց արքայ Արտաշէսի, բայց կ'աւելցնէ. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս հազարաց եւ բիւրս բիւրուց ընդ քաջագլուխ կոյս օրիորդին Ալանաց»:

Արքայ Արտաշէս գիտնալով թէ Ալաններու քով շատ յարգի բան է եւ թանկագին կարմիր մորթը՝ լայքան – իբրեւ վարձանք Սաթենիկի դիմաց – թէ՛ լայքա եւ թէ՛ շատ ոսկի կու տայ եւ կը ստանայ Սաթենիկը իրեն կնութեան. «Լայքա շատ եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու զՏիկին Օրիորդն Սաթենիկ»<sup>88</sup>:

88 Խորեն. Պատմ. էջ 128:

Այս առթիւ հայ ժողովուրդը յօրինած է բանաստեղծական գոհար երգ մը – երգ մը հայ արքայական հարսանիքի – ու երգած է զայն դարերու ընթացքին՝ հասցնելով մինչեւ Մովսէս Խորենացի, երբ մեծ պատմագիրը գրի կ'առնէ զայն փրկելով կորուստէ այնքան թանկագին այդ գոհարը: Ահա այդ անմոռանալի երգը.

«Հեծաւ արի արհայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ եւ հանեալ գոսկէղ շիկափոկ պարանն՝ եւ անցեալ որպէս գարծուի սրաթիւ ընդ գետն եւ ձգեալ գոսկէղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին, Արագ հասուցանելով ի բանակն իւր»<sup>89</sup>:

Կը յաջորդէ թագաւորական հարսանիքը: Անոր մանրամասնութիւնը տրուած չէ: Բայց դարձեալ յուշք մը այդ հարսանիքէն մնացած է – երգի ձեւով – ապացոյց թէ Հայոց արքայ Արտաշէսի եւ Հայոց բամբիջ Տիկին Սաթենիկի հարսանիքին Հայաստանը հարուստ եղած է ոսկիով ու մարգարիտով եւ իբրեւ մեծ ուրախութեան նշան՝ զանոնք կը թափէին փեսային ու հարսին գլխէն վար: Պատմագիրը, որ պահած ու աւանդած է մեզ այս մասին եղած հին երգի ծուէնը, կը գրէ.

«Դոյնպէս զհարսանեաց ... երգեն, այսպէս ասելով. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենիկան: Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց փեսայութեամբ ի դուռն տանարին հասանել դահեկանս ճապարղել ... եւ թագուհեացն յառագաստին՝ մարգարիտս»<sup>90</sup>:

Գաթըրճեան, որ Արտաշէս Բ-ի վերաբերեալ այս պատմական դէպքը եւ երգերուն յօրինման ժամանակը մօտաւորապէս

89 Անդ էջ 128  
90 Անդ, էջ 128:

Քրիստոսէ Հարիւր յիսուն տարի առաջ Համարելու կը միտի,<sup>91</sup> կը գրէ. «Երգերը կը պատմեն թէ Արտաշէսի Ալանաց ազգին հետ ունեցած պատերազմն Ալանաց Սաթենիկ օրիորդին Հայոց թագուհի ըլլալովը լմնցաւ ու Արտաշէս հօրը վարձանք տուաւ կարմիր մորթ, լայքա ու ոսկի եւ հարսանեկան խնճոքին տաճարին (ճաշարահին) դրան առջեւ Արտաշէսի գլուխն ոսկի կը տեղար, Սաթենիկան գլուխն ալ սրսկապանին դրան քով մարգարիտ: Նոյն երգերն սա հարսանիքի պտուղն ու հետեւանքներն անյիշատակ չեն թողուցած»<sup>92</sup>:

Քրիստոնէական շրջանի հարսանեկան հանդէսի մասին ունինք յիշատակութիւններ սկսած չորրորդ դարէն:

Ահա դարձեալ Հայ արքայական հարսանիք մը: Հայաստանի սպարապետը՝ Մանուէլ Մամիկոնեան իր դուստրը՝ Վարդանդուխտ հարս կու տայ Արշակ Արշակունիին, ասոր եղբօր՝ Վաղարշակի կու տայ դուստրը Բագրատունի Ասպետին եւ այս կրկնակի արքայական մեծ հարսանիքներուն ներկայ է Հայոց աւագանին եւ բոլոր նախարարները: Ամբողջ Հայաստանը եւ Հայ ժողովուրդը փեսաւէր է ու հարսնետուր. բովանդակ հայրենի երկիրը կը ցնծայ այս հարսանեկան հանդէսով: Այս դէպքը քանի մը տողով կ'աւանդէ մեզի օրուան պատմիչը՝ Բիւզանդ, որ կը գրէ. «Մեծապէս արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալք խնդացեալք էին ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեան»<sup>93</sup>:

Քրիստոնէական շրջանին որոշ պայմաններ կային սակայն պսակի եւ հարսանեկան հանդէսի համար: Օրինակ. հարսանեկան հանդէսը տեղի կրնար ունենալ, ըստ եկեղեցական օրէնքներու, այնպիսի

91 Հ. Յովսէփ Գաթրոնեան, Պատմ. Մատենագրութեան Հայոց, Վիեննա, 1851, էջ 22-231:  
 92 Անդ, էջ 49:  
 93 Փ. Բուզանդ, Պատմութիւն, էջ 258:

օրեր եւ ատեններ միայն, որ պահոց օր չըլլար, չըլլար Կիրակի օր, չհանդիպէր յինանց շրջանին եւ տօնական օրերուն:

Դուինի 719-ի ժողովը մինչեւ անգամ անվաւեր կը հռչակէր այդ օրերուն կատարուած պսակը: Ահա իր երրորդ կանոնը. «Ոչ է արժան յաւուր Շաբաթու եւ կամ Ճրագալուցի Զատիկին պսակադիրս առնել, զի սուրբ աւուրք յարութեան առաջի կան... Եթէ ոք գտցի զայս արարեալ՝ պսակն անվաւեր լիցի եւ պսակադիրք ընդ պատժովք եղիցին»<sup>94</sup>:

Նոյն ժողովքին հինգերորդ կանոնը կը սահմանէր. «Չէ արժան ի սուրբ քառասնորդս Զատիկին եւ մինչեւ ի սուրբ Պենտակոստէս հարսանիս առնել»<sup>95</sup>: Մինչեւ անգամ պսակի նախորդ օրերը «արբեալ եւ գեղխել» արգելուած էր<sup>96</sup>:

Զագավանի ժողովի (1270-ին) պատուէրն էր, որ պսակէն առաջ իրարմէ հեռու մնային (Կանոն Դ). նոյնը կը յանձնարարէին Դաւիթ Գանձակեցի (ԺԲ. դար), Յոհաննէս եւ Մովսէս Եզնկացիք (ԺԳ-ԺԴ. դար) եւ Յակոբ Ղրիմեցի (ԺԵ. դար) վարդապետները<sup>97</sup>: Եկեղեցւոյ պահանջն էր նախորդ իրիկուրէն սկսած պարկեշտութեամբ անցնել, որպէս զի խօսեցեալները արժանի ըլլային «պսակին օրհնութեան եւ աստուածային հաղորդութեան»<sup>98</sup> Պսակի հանդէսը տեղի կ'ունենար «Յառաւօտէ աւուրն մինչեւ ցժամ ճաշոյն»<sup>99</sup>:

Ըստ Զաքարիա կաթի (Թ. դար) պսակի օրը որոշելու իրաւունքը խօսեցեալներու ծնողքին կը պատկանէր<sup>100</sup>:

94 Մելիք-Թադեւան, անդ, էջ 40:  
 95 Անդ, էջ 410:  
 96 Անդ, էջ 40:  
 97 Հացունի, Հայութիւն, էջ 72:  
 98 Յովն. Օձնեցի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 25:  
 99 Ծնորդակի, Նամակակնի, էջ 167:  
 100 Զաքարիա Կաթողիկոս, Մատք, 187:

Երբ վերջապէս կազմ ու պատրաստ ըլլային հարսն ու փեսան, կը սկսէր բուն հարսանիքի հանդէսը: Խօսքը կու տանք մասնագէտին: Հ. Հացունի կը գրէ 1912ին. «Յետ այսպէս պատրաստուելու, փեսայն հեծած «զարդափայլեալ երիվարի» վրայ եւ շրջապատուած «փեսաւերներէն» բոլորը նոյնպէս պճնած «գեղանման զարդօք» զինուած ու նստած «գեղապաճոյճ երիվարաց» վրայ, կ'երթային հարսին «դուռն» երգերով, ուր կանխաւ հրաւիրակներ կը հասնէին իմացնելու փեսային գալուստը եւ զորս գեղջուկներն «աղուէս» կը կոչէին՝ գաղտնի գալուստ համար: Հարսը վար կ'իջնէր ու կը կազմուէր մեծ թաբորը: Փեսայն առջեւէն իր խումբով եւ միշտ ձիու վրայ, հարսը ետեւէն, նոյնպէս հեծած<sup>101</sup>: Եւ դեռ նոյնպէս կը տեսնէր Թուռնֆոր ի Հայս 1707-ին»<sup>102</sup>:

Արքայական հարսանիքին արքունիքէն իսկ կը տանէին հարսին համար «ոսկիապատ գահաւորակ սպասաւորօք»: Իսկ հարսը կը ներկէին «հարսնեղբարք» կամ «հարսնածուք», որոնց մէջ կային եւ «օրիորդք» եւ «կուսանք» զարդարուած նոյնպէս ըստ իրենց վիճակին եւ արքայական հարսանիքին «ոսկիակուռ շքեղաշուք երփներփեան զարդուք»: այս հետեւորդները, ոմանք նոյնպէս ձիով եւ ոմանք հետիոտն էին:

Արքայական հարսանիքին հարսնածու էին «նախարարքն եւ մեծամեծք աւագանուոյն», որ կ'երթային իբրեւ «շքադիրք» պատիւ առնել» հարսին եւ բոլորը հեծեալ: Հոն ձիաւոր պատանիներու խումբ մը «բարգաւաճեալք յանապական բաժակացն» եւ «փողփողեալ դրօշներ» բռնած՝ կը սկսէին արշաւել ու կայթել առջեւէն ու ետեւէն. Ուրիշ դրօշակիրներ ու տիգաւորներ կ'երթային փեսային ու հարսին քո-

101 Բագմավէպ, 1889  
 102 Tournafort, Relation d'un Voyage du Levant. Լիոն, 1718, Գ., էջ 281:

վէն: Եւ միասին գուսանք «բազում երգօք եւ նուագարանօք, ծնծղայիւք եւ քնարիւք», որոնց հետ մոմեր ալ կը տեսնէր Թուռնֆորը վերջին սովորութեամբ:

Հասնելով եկեղեցւոյն դրան առջեւ կ'իջնէին ձիերէն: Փեսան եւ հարսը իրենց խումբերով կը մտնէին գաւիթը, ուր քահանան պատարագի հանդերձով կ'ընդունէր զանոնք (Մաշտոց 1216-ի, 1373ի-ի), հրապարակաւ կը հարցնէր խօսեցեալներու հաճութիւնն ամուսնանալու եւ անոնց կու տար կենաց կարեւոր խրատները (Մաշտոց 1245ի): Գիտելի է, որ հարսանիքին հանդերձի օրհնութիւն չկար առաջ եւ չենք տեսներ Ս. Ղազարու 16 Մաշտոցներու մէջ սկսեալ ԺԱ.էն մինչեւ 1647-ի օրինակը եւ կ'երեւի նախ 1647-ին եւ 1682-ին գրուածներուն մէջ... Ըստ բնիկ սովորութեան, հոս ամուսնացողները իրարու ձեռք կը բռնէին (Մաշտոց 1216-ի, 1443-ի եւն.): Ապա կը բացուէին տաճարին դռները եւ ներս կը մտնէին բոլորը (Մաշտոց 1216) շարական երգելով (Մաշտոց 1345ի): Մտնելու ժամանակ փեսան իր աջակողմն ունէր հարսը, բռնելով աջով անոր ձախը<sup>103</sup> եւ քահանային առաջնորդութեամբ կ'երթային կը կանգնէին բեմին առջեւ (Մաշտոց՝ 1338-ի. 1345-ի. 1436-ի. 1499-ի):

Ըստ Յովհաննէս Մովսէս Եզնկացւոյ եւ Յակոբ Ղրիմեցւոյն պսակումը կը կանխէր պատարագը: Միսի 1345-ի Մաշտոցն ընդ հակառակն արեւմտեան սովորութեամբ զանոնք իրարու կը խառնէ:

Կը յաջորդէր պսակումը (պսակ դնելը) սկսեալ Դ. դարէն, ծանօթ հինէն ի վեր: Գլխուն այդ զարդը (պսակը), զոյգ անոնց թուով, կոչուեր է սովորաբար պսակ (Փաւստոս՝ 229) եւ երբեմն ալ՝ թագ (Օձնեցի՝ 11), կամ թագ պսակի («Քարոզ Ամարան»՝ 202) եւ նպատակն էր «թագաւորեցուցանել» ամուսնացողները (Օձնեցի,

103 Գեորգ Եզնկ. Քարոզ Ամարան, էջ 251, 255:

11. «Քարոզ Ամար» 203): Քաճանան գանոնք կը գետեղէր նախ բեմին եզերքը, կ'օրհնէր (Մաշտոց 1499-ի) եւ ապա կը դնէր պսակուածներուն գլխուն (Մաշտ. ԺԱ. դար եւ 1499-ին):

Միջին դարուն կար նարոտ կամ առասանն ալ, կարմիր եւ ճերմակ գոյնով («Քարոզ Ամար» 203. Մաշտոց 1507), զոր ըստ Անծանօթին, կ'որոշէին երեք բամբակ թելերով փեսեղբայրը քահանային հետ եւ հարսին քոյրը, նոյնպէս քահանային հետ եւ անով խաչը կը կապէին փեսայի պարանոցին (Անծանօթ 233): Գէորգ Եզնկացին հոս կը յիշէ պսակին հետ թուրը փեսայի մէջքին կապելու սովորութիւնը ... Այս զարդերով կը լրանային անոր թագաւորական նշանները եւ այժմ «փեսայ թագաւոր կոչի», կամ ըստ 1507-ի Մաշտոցին «փեսայ անուանեմք եւ թագաւոր»: Յետոյ բաժակ մը գինի կ'օրհնէր քահանան եւ ըմպել կու տար երկու պսակուածներուն միայն (Գէորգ Եզն. 251), «ի խորհուրդ Կանայի հարսանիքի» («Քարոզ Ամար» 197), ուր Սսոյ 1345-ի Մաշտոցը բաժակին մէջ նշխար մըն ալ ձգել ու ճաշակել կու տայ անոնց:

Արարողութենէն վերջ կ'ըլլէին տաճարէն, պսակուածներուն աջ ու ձախ կողմերէն սուրբը բռնելով<sup>104</sup>: Հոս նորապսակները «նստին յաստիճան եկեղեցւոյն», եւ բոլորը զանոնք շրջապատելով կ'երկրպագեն, թագաւոր կոչելով փեսան,<sup>105</sup> իսկ 1507-ի Մաշտոցը կ'ըսէ, թէ «համբուրեմք երկրպագելով» պսակուածներուն: Եւ նոյն հանդիսաւոր ցնծութեամբ կը դառնային փեսային հօր տունը, ճանապարհին շարունակ երգելով<sup>106</sup>:

Արքայական հին հարսանիքի առթիւ, երբ թաբորը կը հասնէր արքունի տաճարին

104 Անծանօթ,- Բազմավէպ. 1889, էջ 233:  
105 Անդ:  
106 Մաշտոց 1345ի, 1499ի:

(ճաշարահին) դրան առջեւ, թագաւոր փեսան դրամներ կը սփռէր փեսաւէրներուն եւ հարսը՝ մարգարիտ առաքաստին մէջ օրհորդներուն: Միջին դարուն պսակուածները տան մէջ իրենց համար պատրաստ կը գտնէին բարձր մունիսա կամ հաճէք կամ թախտ մը<sup>107</sup> (եւ կը բազմէին անոր վրայ, հարսը փեսային աջակողմը, որպէս զի «ակներեւ ամենեցուն տեսանիցի»<sup>108</sup>:

Միջին դարուն, երբ հարսանիքի հանդէսը փեսային տունը կը հասնէր, կար նուիրատուութեան սովորութիւն մը, անկախ օժիտի բաժինէն, զոր ներկայացուցինք վերը: Ասոնք էին. «Բաժինք, օժիտք եւ պարգեւք: Բաժինքը հարսին հօրմէն «վասն պիտոյից պսակին», օժիտքը փեսային կը տրուէին նոր կենակցին, իսկ պարգեւք «ի բարեկամաց»,<sup>109</sup> զոր կը յիշէ Մխիթար Գօշ իբր «միմեանց ազգականաց ընծայք»<sup>110</sup>:

Արչակունեաց օրով ազգը ինքնին «օժիտաբեր ընծայատար» կ'ըլլար արքայական հարսանիքին «ըստ օրինացն թագաւորաց»<sup>111</sup> եւ այդ առթիւ փեսայ արքան իր կողմէ կու տար «առատապէս պարգեւս ամենեցուն նախարարացն»<sup>112</sup>:

Պսակող քահանային համար կար «կարգեալ բաժին» մը «ընծայիւք» հանդերձ<sup>113</sup>: Նորա պսակները մինչեւ իրիկուն չէին ուտեր ու խմեր թեթեւ ճաշէ մը զատ<sup>114</sup>:

Հարսանիքի տեւողութիւնը կախում ունէր ժամանակէն, տեղէն ու ծնողքի կարողութենէն. Գէորգ Եզնկացին եւ Անծանօթը «եօթն օր» կը դնեն, մինչ Գր. Տաթե-

107 Գէորգ Եզն. «Քարոզ Ամարան», էջ 253-255:  
108 Հացունի, Հայուհիճ, էջ 73-75:  
109 Գէորգ Եզն. Քարոզ Ամարան, էջ 203:  
110 Մխիթար Գօշ, Դատաստանագիրք, էջ 98:  
111 Ագաթ., Վեճեսիկ 1862, էջ 114:  
112 Խորեն. Գլ. ԻԲ:  
113 Կիր. Գանձակեցի. Պատմ. էջ 172:  
114 Անծանօթ,- Բազմավէպ, 1889, էջ 234:

ւացին «երեք օր» (Գէորգ Եզն. 252: Անծանօթ. 234: «Քարոզ Ամար. 204):

Պարերը – Հարսանիքի պարերը եւ երգերը կը յիշուին չորրորդ դարէն իսկ, երբ Տրդատի երեւակայեալ հարսանիքին առթիւ «առհասարակ երգս առեալ բարբառեցան կայթիւք վազելովք, ցուցք բարձեալ մարդկան ... լցին խնձոյիւք առհասարակ, համարէին հարսանեաց զպարսն պարել եւ զկաքաւան յորդորել»<sup>115</sup>: Միջին դարուն այդ պարերուն կը մասնակցէին «կուսանք» (աղջիկներ), բայց ոչ «առնակիներ» (ամուսնացած կիներ)<sup>116</sup>, որոնց կ'ընկերանային «նուագարանք»<sup>117</sup>, փողեր ու սրինգներ «յորդորել զպարսն»<sup>118</sup>:

Հարսանիքի երգերը արքայական հարսանիքի առթիւ գովեստներ էին փեսայի աշխարհին, տոհմին ու քաջութեան<sup>119</sup>, իսկ հասարակ ժողովուրդին երգածները ժամանակակից հոգեւորականներէն կը համարուէին «գիւական երգք»<sup>120</sup>, «հեթանոսական», «ղիւական խաղք»<sup>121</sup>:

Ե. դարու հայ հարսանիքին մասնակից են «գուսաններն» (երգիչ դերասան) ու «վարձակները» (պարուհի, դերասանուհի) իրենց դերերով<sup>122</sup>, որոնց ներկայութիւնը շարունակուած է մինչեւ ԺԲ. դար, որովհետեւ Շնորհալին կը պախարակէր «անառակ արանց կամ կանանց» մասնակցութիւնը եւ չէր ուզեր «լսել եւ խօսիլ զանուղղայս»<sup>123</sup> Բարսեղ Մաշկուացի ԺԳ. դարու հայ հարսանիքը կը նկարագրէ

115 Ագաթ. Պատմ., էջ 139:  
116 Բարսեղ Մաշկուացի, Մեկն. Աւետ. Մարկ., Կ. Պ., 1826, էջ 65:  
117 Թնորհալի, Նամականի, էջ 162:  
118 Խորենացի, էջ 310:  
119 Անդ, էջ 307:  
120 Թնորհալի, Նամականի, էջ 167:  
121 Դատիթ Ալավկայ որդի, Կանոնական օրէնդրութիւն:  
122 Հմմտ. Ոսկեբերան, Մեկն. Թղ. Պաղոսի Բ, էջ 664:  
123 Թնորհալի, Նամականի, էջ 167, 169:

այսպիսի մոայլ բառերով. «Անդ տեսցես խօսս եւ ծաղրս ամօթալիցս, զգեստս եւ ճեմս լցեալ խայտառակութեամբ եւ ընաւ այլ ինչ անդ ոչ իցէ քան թէ ծաղր եւ կատականս... Ոմանք իբրեւ զճիս խինջեն եւ այլք իբրեւ զէշս աքացեն եւ ըստ կամաց սատանայի կան ամենեքեան. անդ գուսանք եւ փողք եւ երգք պոռնկականք եւ շնութեամբ լցեալք»<sup>124</sup>:

Հացունի կը յարէ թէ «եկեղեցւոյ խստակրօն Հայրերու պահանջած լուրջ եւ բարոյալից հարսանիքը գուցէ երեք գոյութիւն չէ ունեցած մեր քով»<sup>125</sup>:


Քանի մը խօսք ալ հարսանեկան սենեակի կամ «առաքաստի» մասին:

Ե. դարու բառ է «առաքաստ»ը եւ բառական իմաստն է վարագոյր. ասկէ առնուած նաեւ նաւուն լայն կտուր կոչուած է «առաքաստ», «առաքաստանալ»: Հարսանիքի մէջ «առաքաստ» կը կոչուէր նախ այն վարագոյրը, որ կը զատէր նորահարսին սենեակը հասարակաց սենեակներէն: Սկզբնական այս իմաստը «առաքաստ» բառին, իբրեւ «վարագոյր», յետոյ ընդարձակուած է կոչուելով նաեւ այն սենեակը, որ կը յատկացուէր նորահարսին:

«Առաքաստ»ը վարագոյր իմաստով իրեն հոմանիչ ունի «սրահակք» եւ «սրակապանք» Եղիշէի քով, որ Ե. դարու հայ նորահարսներու սենեակներուն համար կը գրէ. «Փոշոտեցան եւ ծխոտեցան սրահակք եւ սրակապանք նորեկ հարսանց»<sup>126</sup>: Եղիշէ այդ նոյն տեղիքին անմիջապէս կից ունի «առաքաստ»ը իբրեւ «սենեակ նորահարսի» իմաստով. Սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առաքաստաց նոցա»<sup>127</sup>:

Բառին իմաստը տալէ վերջ, այժմ տեսնենք հայ սովորոյթը: Հարսանիքի

124 Բարսեղ Մաշկ., էջ 215:  
125 Հայուհիճ, էջ 77:  
126 Եղիշէ, Մատենագր., Վեճեսիկ, 1859, էջ 156:  
127 Անդ, էջ 156:



ժամանակ «առաքաստի համար մեծամեծ տուններու մէջ կը յատկացուէր «սենեակ» մը: Իսկ պարզ բնակարաններու մէջ, ուր հասարակաց ննջարան ունէին, մեծ վարագոյրով մը կը զատէին զայն: Այս նպատակով քահանաներ երբեմն փոխ կու տային «եկեղեցւոյ վարագոյրը», որուն համար Ս. Սահակի Կանոնները կը սպառնան կարգազուրկ ընել զանոնք», կը գրէ Հացունի<sup>128</sup>: Նորահարսին յատկացուած «առաքաստ»-ի սենեակը կը կղզիացնէր նորահարսը ընտանիքի անդամներէն ու ազգականներէն, որոնք դիւրաւ չէին կրնար մօտենալ անոր: Չորրորդ դարէն ունինք օրինակ մը Տիրիթ Արշակունի, Գնելի հօրեղբորորդին, Գնելի նորապսակ կինը՝ Փառանձեմը տեսնելու համար մեծ դժուարութեան կը հանդիպի. «Անգանէր ի գաղտագողօնս»<sup>129</sup>: Հին հայ նորահարսին սենեակի ներքին կազմի մասին գաղափար մը կու տայ Հացունի, գրելով. «Նուազ չէ անոնց ննջասենեակաց պերճանքն ալ, ուր ձգուած կան «Բազմադիմի անկողինք»<sup>130</sup> կամ «նկարեալ պատշգամք»,<sup>131</sup> այն է զանազան ձիերով ու գոյներով յօրինուած ու առաւելագոյն ճոխութեան պարագային գահոյք ալ կոչուած<sup>132</sup>: Այս կարասին կը կազմուի երկու մասերէ՝ մահիճք կամ մարճակ (անդ), որ է ներքին քառոտանի ու բարձր մասը, եւ ծանօթ բրդեղէն անկողինն, որ անոր վրայ կը տարածուի: Ասոր վրայ հաւանական էր, ինչպէս ուրիշ տեղեր, նաեւ մեր քով դնել պաստառակալը կամ սաւանը, իսկ սովորական բարձր կամ սնարը գլխին ներքեւ եւ մարմնոյն վրայ վերմակը, որ ըստ աստիճանի անձին կրնայ եւ շատ հարուստ լինել, օրինակ «ոսկեհոլ» եւ գա-

հոյքն ալ «ակնակապք եւ համակ ոսկեղէնք», ինչպէս արքունիքի մէջ<sup>133</sup>:

Ըստ ակնարկութեան Եղիշէի, տիկնանց գահոյից վրայէն ցերեկը կը վերցնէին անկողինը, զանոնք գործածել կարենալու համար եւ երեկոյին դարձեալ «անկողնարկ լինէին»<sup>134</sup>: Նորեկ հարսերու սենեակներու մէջ ասոնց հետ կը տեսնուին «սրահակք եւ սրսկապանք» կոչուած վարագոյրներ ալ. սրահակը կախուած դրան ետեւ<sup>135</sup> ի զգուշութիւն դրան բացուելու եւ փակուելու պահուն եւ սրսկապանը խորանաձեւ ծածկելով անոնց մահիճք: Հայ բանակին մէջ անգամ կը տեսնէր պատմիչն «զհովանոցս եւ զսրահակս եւ զգահոյս եւ զանկողինս»<sup>136</sup>:

Հարսանեկան սենեակը կամ «առաքաստը» յետին դարերու մէջ կոչուած է նաեւ «հարսնարան»<sup>137</sup>: Երբ կը հասնէր հարսին հոն առաջնորդելու ժամը, հարսնածու աղջիկներ «թմբկօք եւ պարուք» կ'առաջնորդէին հարսը<sup>138</sup>: Խորենացւոյն ալ ծանօթ էին «առաքաստի երգք», զորս կ'երգէին դեռ իր օրով<sup>139</sup>: Թէ ինչ էին այդ երգերը, աւանդած չէ Խորենացի:

Հարսանիքի երրորդ օրը կը վերցնէին հարսին քողը: Իսկ ութերորդ օրն ալ կ'առնէին պսակները<sup>140</sup>, զոր 1446-ի Մաշտոցը «յաւուրն երրորդի» կը դնէ:

(Շարունակելի)

133 Եղիշէ, անդ, էջ 134:  
 134 Անդ, անդ, էջ 156:  
 135 Հմմտ. Ելք, ԻԶ 36, ԼԸ. 18, ԼԹ. 38, Խ 26, 31:  
 136 Փաւստ, էջ 135: Հացունի, Հայրնիս, էջ 17-18:  
 137 Արիստակէս Լաստիվերտացի, Պատմութ., Վեցտիկ 1844, էջ 40:  
 138 Խորենացի, Մատեն., Վեցտիկ, 1865, էջ 311:  
 139 Խորենացի. Գլ.ԿԸ: Հացունի, Հայրնիս, էջ 78:  
 140 Զազաւանի ժողով, Գեորգ Եզն., էջ 256, 257:

128 Թեոդիկ, Ամէն. Տարեգիրքը, 1912, էջ 207:  
 129 Փաւստ., Վեցտիկ 1933, էջ 125:  
 130 Ղազար Փարպեցի, Պատմ., Վեցտիկ, 1873, էջ 332:  
 131 Եղիշէ, անդ, էջ 97:  
 132 Յովն. Ոսկեր. Պատմ. Ա., էջ 816:

## ՊՐՈԿՂ ԿՈՆՍՏԱՆԳԻՆՈՒՊՈԼՍԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՃԱՌԵՐԻ ԸՆԹԵՆՈՒՄԸ

Յակոբ Բեօտեան

Պրոկղ՝ Կ. Պոլսի պատրիարքը աթոռը զբաղեցրել է 434-446 թթ: Եղել է աշակերտն ու մերձաւորագոյն բարեկամներից մեկը ս. Յովհան Ոսկեբերանի, որի նշխարները փոխադրել է Կ.Պոլիս 439 թ.: Լինելով ս. Կիւրեղ Ալեքսանդրացու խոհակիցը՝ 429 թ. նա հրապարակաւ դատապարտում է Նեստորի և Թէոդորոս Մոփսուեստացու վարդապետութիւնը: Պատահական չէ, որ Պրոկղն արդէն այդ շրջանում, նախքան Երրորդ տիեզերական ժողովի գումարումը, իր քարոզներում հետևողականօրէն շեշտում է Մարիամ «Աստուածածին» լինելն ի հակակշիռ նեստորեան պնդումների: Հականեստորեան և հակաթէոդորոսեան պայքարի արձագանքները լսելի են հայոց հասցեագրած նրա նշանաւոր Հաւատոյ թղթում<sup>1</sup>: Այստեղ, ինչպէս նաև՝ նրա ճառերում առկայ վարդապետական մտածումները որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում Երրորդ տիեզերական ժողովի և Քաղկեդոնի ժողովի միջակայ ժամանակահատուածում քրիստոսաբանական ընկալումների հետազօտութեան համար: Նրա քրիստոսաբանական ձևակերպումներն ակներևօրէն հիմնուած են ս. Կիւրեղ Ալեքսանդրացու վարդապետական ժառանգութեան վրայ, որի հիմնադրոյթները Պրոկղի ջանքերով ի սպաս են դրւում օ-

րուայ հրատապ խնդիրների լուծմանը: Քրիստոսաբանական այս ոգին ներկայ է ինչպէս Հայոց յղած Հաւատոյ նամակում (« Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սահակ հայրապետ Հայոց եւ առ սուրբն Մաթղոց»), այնպէս էլ նրա ճառերում:

Պրոկղի անունով մեզ են հասել թուով քսանմեկ ճառեր, որոնք, ըստ նախնեաց վկայութիւնների, շատ նման են Յովհան Ոսկեբերանի և Բարսեղ Կեսարացու համարնոյթ երկերին: Նրա գրչին են պատկանում Մարիամ Աստուածածին<sup>2</sup>, Աստուածայտնութեանը<sup>3</sup>, Պայծառակերպմանը<sup>4</sup>, Ծաղկազարդին<sup>5</sup>, Զատիկին<sup>6</sup>, Հոգեգալստեանը<sup>7</sup>, Պօղոս, Անդրէաս առաքելներին, Յովհան Ոսկեբերանին<sup>8</sup>, Պարասկեա կոյսին<sup>9</sup> նուրիւած ճառերն ու ներբողները: Ծառերն օգտակար են ժամանակաշրջանի աստուածաբանական մտքի ուսումնասիրման համար: Մարիամ Աստուածածինն նուիրուած ճառերը շահեկան են մասնաւորաբար քրիստոսաբանական կարևոր դիտումներով: Սուրբ ծննդեան ճառերից երկրորդում խօսւում է քրիստոնէական տօների հոգևոր նշանակութեան, իսկ Հոգեգալստեան ճառում՝ Ս. Հոգու աստուածութեան վերաբերեալ: Ինչպէս իրաւացիօրէն նկա-

1 Տե՛ս PG, 65, 855B-873B. հայ. թրգմ. Գիրք թղթոց, խմբ. Ն. Արք. Պողարեան, Երուսաղէմ, 1994, էջ 30-40: Թղթի աստուածաբանական քննութիւնը տե՛ս С.А. Медведев, Богословие „Томоса Армянам., свт. Прокла Константинопольского – "XV Ежегодная Богословская конференция. 2005", с. 114-117:  
 2 Տե՛ս PG, 65, 679-692  
 3 Անդ, 757-763:  
 4 Անդ, 763-772:  
 5 Անդ, 772-777:  
 6 Անդ, 789-796, 796-800, 800-805:  
 7 Անդ, 805- 817:  
 8 Անդ, 817-821, 821-828, 828-833:  
 9 Անդ, 781-788: